Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
անհատ խորհրդատուի ընտրություն

08 հուլիս, 2024թ.

Վարկի համարը՝ IBRD 85720 «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքի զարգացման ծրագիր» (ՏՏԵԶԾ)
Առաջադրանքի անվանումը՝ «ԳՈՐԻՍՈՒՄ ՍԵՐՈ ԽԱՆԶԱԴՅԱՆԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» TUR- 22 ԵՆԹԱԾՐԱԳՐՈՎ ԻՆՏԵՐԻԵՐԻ ԵՎ ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ԴԻԶԱՅՆԻ ՓԱԹԵԹԻ ՄՇԱԿՄԱՆ անհատ խորհրդատու
Փաթեթի համարը (համաձայն գնումների պլանի)՝ **LIC-23**
Վերջնաժամկետ՝ 2024թ. հուլիսի 12-ը

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամն իրականացնում է Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագիրը»: Ծրագրի առաջնահերթ նպատակներից է բարելավել ենթակառուցվածքային ծառայությունները և ինստիտուցիոնալ կարողությունները՝ Հայաստանի ընտրված մարզերում տեղական տնտեսության մեջ զբոսաշրջության ներդրման ավելացման համար: Ակնկալվում է, որ ծրագրի գործողությունները օգուտ կբերեն Հայաստանի հինգ մարզերի՝ Արարատի, Կոտայքի, Լոռու, Սյունիքի և Վայոց ձորի մարզերի բնակիչներին, զբոսաշրջիկներին և ձեռնարկություններին: Վերանորոգված մշակութային ժառանգության վայրերում և քաղաքներում հանրային ենթակառուցվածքներն ավելի մեծ մատչելիություն և որակ կունենան, տարածաշրջանում կաճի մասնավոր հատվածի ներդրումների ծավալը, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկությունների քանակը: Կառավարությունը կշահի զբոսաշրջության ոլորտի ընդհանուր ծախսերի և զբոսաշրջիկների բավարարվածության բարձրացման, աշխատատեղերի ստեղծման, գործակալությունների ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման, ակտիվների շահագործման և պահպանման կարողությունների բարելավման առումով: ՏՏԵԶ ծրագրի բաղադրիչներից մեկը վերաբերվում է Հանրային ենթակառուցվածքի տրամադրմանը մասնավոր ներդրումներ ներգրավելու նպատակով:

Սերո Խանզադյանի տուն թանգարանը հիմնվել է 2008 Գորիս քաղաքում, որտեղ Սերո Խանզադյանն ապրել ու աշխատել է 1970 ական թվականներից հետո: 2015թ. Սերո Խանզադյանի տուն թանգարանը վերանորոգվեց, երբ 2018թ. Գորիսը հռչակվեց ԱՊՀ երկրների մշակութային կենտրոն, Սերո Խանզադյանի տուն թանգարանը այդ միջավայրի մի կենսական մասը դարձավ:

Թանգարանում պահվում են գրողի անձնական իրերը, գրական-հասարակական գործունեությունը ներկայացնող նյութեր, ցուցանմուշներ, որոնք ներկայացնում են գրողի ապրած ժամանակաշրջանի կյանքն ու կենցաղը: Մի շարք ցուցանմուշներ թանգարանին է փոխանցել Սերո Խանզադյանի որդին: Ենթածրագրի շրջանակներում նախատեսվում է տուն-թանգարանի սենյակներում իրականացնել վերանորոգման աշխատանքներ և ներկայացնել հեղինակի ստեղծագործությունները:

Ենթածրագրի իրականացման հիմնական նպատակներն ու ակնկալվող արդյունքներն են՝

1) նպաստել Սերո Խանզադյանի ստեղծագործությունների պահպանմանն ու հանրահռչակմանը,
2) տեղացիների և զբոսաշրջիկների համար ստեղծել բարեկարգ հանրային ենթակառուցվածք
3) Սյունիքի մարզում նպաստել նոր դիվերսիֆիկացված արդյունքի ձևավորմանը
4) ավելացնել տարածաշրջան զբոսաշրջային այցելությունների քանակը

Առաջադրանքը ներառում է ինտերիերի և բակային տարածքի դիզայնի նախագծի մշակման հետևյալ աշխատանքներ՝

Բակային տարածքում՝

- Թարմացնել մուտքի բետոնե կամարների ներկը, փայտե դարպասի լաքապատ ծածկույթը, մետաղե ցանկապատի ներկը,
- փոխարինել և լրացնել արտաքին լուսավորության լուսատուները, մետաղե ծաղկամանները հանել, փոխարենը տեղադրել միջավայրին համահունչ ծաղկամաններ, փոխարինել և ամրացնել լուսավորության հենասյուների արկղները,
- բակի հարավային մասում տեղադրել երկար նստարան՝ բացօթյա միջոցառումներ և դասախոսություններ կազմակերպելու համար,
- բակի ներքևի հատվածում տեղադրել նստարաններ և հեռադիտակ՝ քաղաքի համայնապատկերները դիտելու, նկարելու, լուսանկարելու համար,
- Վիշապաքարերի կրկնօրինակների համար պատվանդանների պատրաստում, տեղադրում, լուսավորության նախատեսում:

Կիսանկուղային հարկի ութնիստ դահլիճում՝

- գոյություն ունեցող ց/ա շերտի քանդում, նոր ց/ա շերտի իրականացում,
- ինքնահարթեցվող հատակի իրականացում,
- հատակի իրականացում վինիլային սալիկներով
- շրիշակի իրականացում փայտից,
- պատերի և հիմնային ելուստի ծեփամածկում (գիպսային և կավճային) փակելով անհարթությունները և խոռոչները
- պատերի ներկում բարձրորակ լատեքսային ներկով
- առաստաղների ծեփամածկում (գիպսային և կավճային) փակելով անհարթությունները և խոռոչները
- առաստաղների ներկում բարձրորակ լատեքսային ներկով

Կիսանկուղային հարկի նախամուտքում՝

- գոյություն ունեցող ց/ա շերտի քանդում, նոր ց/ա շերտի իրականացում,
- հատակի իրականացում կերամիկական սալիկներով,
- շրիշակի իրականացում 15 սմ բարձրությամբ կերամիկական սալիկներից,
- պատերի ծեփամածկում (գիպսային և կավճային) փակելով անհարթությունները և խոռոչները
- պատերի ներկում բարձրորակ լատեքսային ներկով,
- առաստաղների ծեփամածկում (գիպսային և կավճային) փակելով անհարթությունները և խոռոչները,
- առաստաղների ներկում բարձրորակ լատեքսային ներկով,
- նախամուտքի դռան վրա հովանոցի իրականացում /կոփած ապակուց կամ այլ նյութից /,
- կիսանկուղային հարկ տանող դռան վերանորոգում/փոխարինում

Կիսանկուղային հարկի ութնիստ դահլիճի և նախամուտքի ինժեներական սարքավորումների մասով՝

- Ջեռուցում՝ պատի էլեկտրական մարտկոցներով ,
- Օդափոխություն՝ բնական օդափոխության համար երեք կամարաձև պատուհանները փոխարինել բացվող տարբերակով, 4 ուղղանկյուն բացվածքներում տեղադրել բացվող պատուհաններ,
- լուսավորություն՝ լուսատուների սխեմայի և լուսատուների տիպերի ընտրությամբ ստանալ տեսանելի ավելի բարձր առաստաղ,
- հրդեհային ազդանշանային համակարգի սխեմա:

Կիսանկուղային հարկի ութնիստ դահլիճի կահավորում՝

- գրապահարաններ կամ գրադարակներ՝10*(1200x1800մմ), յուրաքանչյուրը՝ 6 դարակ 300մմ բարձրությամբ),
- փափուկ նստարաններ պատի ելուստի վրա և կենտրոնական սյան շուրջ
- սեղաններ՝ 4x (800մմ x 1600մմ)
- գրասենյակային աթոռներ՝ 10 հատ:

Ցուցադրության հիմնական դահլիճում (1-ին հարկ)՝

- պատերի և առաստաղի ներկում /բացացնելով պատերի գույնը/,
- առաստաղի տակ փայտե գերանների ամրացում,
- առաստաղի և պատերի վրա ամրացված լուսատուների փոխարինում ժամանակաշրջանին և ինտերիերին համահունչ և ութնիստ դահլիճի մասշտաբին համապատասխան լուսատուներով
- հատակի հղկում, մանրատախտակի մշակում փայտի տոգորիչով /օրինակ՝ ZAR interior oil base stain կամ նմանատիպ/, անփայլ լաքապատում,
- փոխարինել ջեռուցման խողովակները քողարկող լամինատե շրիշակները, փոխարինել փայտից պատրաստված շրիշակներով,
- վերանորոգել կամ փոխարինել պատշգամբի դուռը, մշակել փայտի տոգորիչ նյութով, գույնը համապատասխանեցնել պատուհանների գույնին,
- ցանկալի է նաև փոխարինել թանգարանային ցուցադրության սեղանները:

Ցուցադրության անձնական սենյակում /ննջարան/՝

- պատերի և առաստաղի ներկում /բացացնելով պատերի գույնը/,
- լամինատե հատակի փոխարինում փայտե մանրատախտակով, մանրատախտակը մշակել փայտի տոգորիչով /օրինակ՝ ZAR interior oil base stain կամ նմանատիպ/ և ծածկվել անփայլ լաքով,
- առաստաղի լուսավորության ջահի փոխարինում, ընտրելով ժամանակաշրջանին և միաժամանակ թանգարանային սենքին համապատասխանող տարբերակ,
- թաքցնել ջեռուցման մարտկոցները փայտե վահանների ետևում,

վերանայել ցուցադրվող կահույքի կազմը և տեղաբաշխումը:

Ճարտարապետական և դիզայներական լուծումները, բարեկարգման տարրերը պետք է ընտրվեն տուն-թանգարանի ձևավորված միջավայրին և համապատասխան ժամանակաշրջանին ներդաշնակ, կիրառվող նյութերը լինեն երկարակյաց, փոշի չարտադրող, հեշտ լվացվող, բակային տարածքի կահավորումը լինի դիմացկուն սեզոնային ջերմաստիճանային տատանումների նկատմամբ:

Օգտագործվող լուսավորության լամպերը պետք է լինեն էներգախնայող և էներգաարդյունավետ:

Տարածքը պետք է հնարավորինս հարմարեցված լինի հաշմանդամների և սահմանափակ շարժունակություն ունեցող անձանց համար, օրինակ՝ թեքահարթակների, հատուկ սալիկների /ուղղորդող, նախազգուշացնող, այլ շոշափելի սալիկներ/, գծանշումների, ճաղավանդակների և այլ անհրաժեշտ միջոցառումների նախատեսում:

Նախատեսվում է վարձել Անհատ Խորհրդատու ՝ հետևյալ գործառույթները իրականացնելու նպատակով.

Անհատ խորհրդատուի աշխատանքային պարտականությունները ներառում են, բայց չեն սահմանափակվում.

- տարածքի ուսումնասիրում, չափագրություն, նախատեսվող աշխատանքների ծավալների գնահատում,
- ինտերիերի դիզայնի, կահավորման և բարեկարգման էսքիզային տարբերակների մշակում, համաձայնեցում պատվիրատուի հետ (նախագծային փաստաթղթերի մշակումը կշարունակվի Պատվիրատուի կողմից ընտրված տարբերակի հիման վրա),
- Նախագծային փաստաթղթերի մշակում, մասնագրերի, ամփոփ ծավալաթերթի, նախահաշվի և ծավալաթերթ-նախահաշվի կազմում,
- Նախագծի համաձայնեցում շահագրգիռ մարմինների հետ, մասնավորապես՝ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի և Գորիսի համայնքապետարանի համապատասխան բաժնի հետ:
- Նախագծանախահաշվային փաստաթղթերը՝ քաղաքաշինական պարզ փորձաքննության ներկայացում և դրական եզրակացության ստացում:

ա. Նախագծման փուլում Խորհրդատուն պետք է՝

1) մինչև մանրամասն աշխատանքային գծագրերի մշակումը, բոլոր նախագծային լուծումները համաձայնեցնել Պատվիրատուի հետ, ներկայացնելով լուծումների էսքիզային տարբերակներ,
2) նախագիծը մշակելիս առաջնորդվել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներով,
3) հաշվի առնելով պատվիրատուի դիտողությունները և մեկնաբանությունները, կատարել համապատասխան փոփոխություններ նախագծում:
4) հաշվի առնել նախագծի փորձաքննության (քաղաքաշինական փաստաթղթերի պարզ փորձաքննություն) պահանջները, դիտողություններն ու առաջարկությունները և դրանց համապատասխան նախագծում կատարել փոփոխություններ/ճշգրտումներ:
5) ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան ավարտված նախագիծը համաձայնեցնել շահագրգիռ մարմինների հետ:

բ. Հեղինակային հսկողության ընթացքում՝

Հեղինակային հսկողությունն իրականացնել համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարի 28.09.1998թ-ի թիվ 143 հրամանի շինարարության նկատմամբ հեղրնակային հսկողության իրականացման հրահանգի, մասնավորապես՝

1) կազմակերպել շինհրապարակի այցելություններն ըստ Պատվիրատուի հետ համաձայնեցված ժամանակացույցի, ամսեկան առնվազն 2 անգամ,
2) անհրաժեշտության դեպքում, ժամանակացույցից դուրս, այցելել շինհրապարակ ըստ Պատվիրատուի մասնագետների պահանջի,
3) ստուգել կատարված աշխատանքների համապատասխանությունը նախագծին,
4) կատարել անհրաժեշտ խորհրդատվություններ Պատվիրատուի մասնագետներին շինարարության ընթացքում, մասնակցել շինարարի կողմից նյութերի, սարքավորումների, կահույքի, բարեկարգման տարրերի ընտրությանը, նախագծից ցանկացած շեղում համաձայնեցնելով Պատվիրատուի հետ:
5) պատշաճ կերպով վարել հեղինակային հսկողության մատյանը, նշելով բոլոր հայտնաբերված թերությունները, շեղումները և հանձնարարականներ տալ նրանց վերացման վերաբերյալ,
6) վերացնել շինարարության ընթացքում հայտնաբերված նախագծային բացթողումները, ժամանակին լուծել նախագծին վերաբերող՝ շինարարության ընթացքում ծագած հարցերը, համաձայնեցնելով այն Պատվիրատուի հետ,

7) շինարարության վարման ընդհանուր մատյանի համապատասխան բաժնում գրանցել նախագծային լուծումներից կատարված շեղումները, այդ մասին տեղյակ պահելով Պատվիրատուին,
8) գրավոր տեղեկացնել Պատվիրատուին հայտնաբերված թերությունների և շեղումների մասին, ներառյալ համապատասխանությունն անվտանգության կանոններին:
9) մասնակցել ավարտված շինարարական աշխատանքերի հանձման գործընթացին:
10) անհապաղ տեղեկացնել Պատվիրատուին և ստանալ նրա համաձայնությունը ժամանակացույցում կամ նախապես համաձայնեցված լուծումներում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության մասին:
11) ստորագրել ծածկված աշխատանքների և շինարարության ավարտական ակտերը, իսկ չստորագրելու դեպքում՝ Պատվիրատուին գրավոր ներկայացնել մերժման հիմնավորումները,
12) կառույցների և ենթակառուցվածքի կայունությանը և հուսալիությանը սպառնացող թերությունների, նախագծից անթույլատրելի կամ էական (որոնք կարող են բերել շինարարության արժեքի կամ ժամկետի զգալի աճի) շեղումների հայտնաբերման դեպքում 2 օրյա ժամկետում գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

Կնքվելիք ծառայությունների մատուցման պայմանագրի գործունեության ժամկետը կսահմանվի մինչև **130 օրացուցային օր:**

Խորհրդատուների ընտրության չափանիշներն են՝

	նախագծի մշակման համար պատասխանատու մասնագետ՝	**Կրթություն/Արտոնագիր/Լիցենզիա/Աշխատանքային փորձ**
1	ինտերիերի դիզայներ կամ ճարտարապետ՝ մասնագիտացված ինտերիերի դիզայնի ուղղությամբ	Բարձրագույն կրթություն: Ընդունելի մասնագիտություններ՝ ինտերիերի դիզայն, դիզայն, ճարտարապետություն, առնվազն 7 տարվա մասնագիտական փորձ

Աշխատանքային փորձ, հիմնավորող փաստաթղթեր.

- Նմանատիպ աշխատանքների իրականացման փորձ, վերջին 5 տարիների ընթացքում՝

Բնակելի կամ հասարակական շենքերի ներքին տարածքների ձևավորման (ինտերիերի դիզայնի) նախագծման/իրականացման պայմանագրեր (հիմնավորող փոստաթղթեր են՝ պայմանագիրը, ինտերիերի դիզայնի նախագիծը և իրականացված ինտերիերի լուսանկարները):

- Հատուկ աշխատանքների իրականացման փորձ, վերջին 5 տարիների ընթացքում՝ *Կահույքի պատրաստման մանրամասն նախագծերի/գծագրերի մշակում (հիմնավորող փոստաթղթեր են՝ պայմանագիրը, կահույքի պատրաստման նախագծերը/գծագրերը և իրականացված կահույքի լուսանկարները)*

Հետաքրքրված խորհրդատուն պետք է ներկայացնի տվյալներ իր կրթության և աշխատանքային փորձի վերաբերյալ (CV), որակավորումը հիմնավորող փաստաթղթեր և անհրաժեշտության դեպքում Պատվիրատուի կողմից պահանջվող այլ տեղեկատվություն: Խորհրդատուի ընտրությունը կիրականացվի Համաշխարհային Բանկի ուղեցույցի “Համաշխարհային բանկի փոխառուների կողմից ՎԶՄԲ-ի փոխառությունների և ՄԶԸ-ի վարկերի և դրամաշնորհների շրջանակներում խորհրդատուների ընտրություն և վարձում, հունվար 2011, փոփոխված 2014թ” սահմանված «Անհատ Խորհրդատուի ընտրության» ընթացակարգի համաձայն:
Լրացուցիչ տեղեկություններ հնարավոր է ստանալ ստորև բերված հասցեում, ՀՏՋՀ-ի գրասենյակից, աշխատանքային օրերին, ժամը 09:00-ից մինչև 18:00-ը:

Փաստաթղթեր պետք է ներկայացվեն էլ-փոստով՝ procurement.atdf@gmail.com հասցեներով, ոչ ուշ **քան** 2024թ. հուլիսի 12-ը, ժամը 17:00**:**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ,
ՀՀ, ք.Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31, ՀՏԶՀ գրասենյակ,
Գնումների վարչություն
Հեռախոսը՝ (374 60) 50-15-60: